

Կանխատեսել տարեկան կտրվածքով դրամական հոսքերը

Սակագների հաշվարկներն ունենալուց հետո, մեզ մնում է միայն ծառայությունների մատուցման/ապրանքների վաճառքի համար կանխատեսել դրամական միջոցների մուտքերի և ելքերի մանրամասն պլանը, որով առաջնորդվելով հնարավոր կլինի արդյունավետ կառավարել թե գույքը/տեխնիկան և թե ֆինանսական ռեսուրսները: Դրա համար օգտվելու ենք ֆինանսական պլանից:

Ֆինանսական պլանը ընկած է ցանկացած ձեռնարկատիրական գործունեության հիմքում, առանց որի հնարավոր չէ պատկերացնել կայունությունն ու արդյունավետ գործունեությունը՝ դա լինի ՓՄՁ, գուտ շահույթ հետապնդող կազմակերպություն, թե սոց. ձեռնարկություն, այդ շահույթն սոցիալական որևէ խնդրի վերացման մասով: Ֆինանսական պլանը բաղկացած է մի շարք բաղադրիչներից, որոնց նկարագրերը ներկայցվում են ստորև.

- **Հիմնական միջոց** - հիմնական միջոց է համարվում մեկ տարվա ընթացքում չմաշվող(չվերացող), 25,000 ՀՀ դրամից բարձր արժեք և մեկ արտադրական պրոցեսսի ընթացքում չսպառվող առարկանները: Օրինակ՝ տեխնիկայի մասերը կամ այլ մասերը, որոնք թեպետ հիմնական միջոց չենք կարող համարել, բայց հիմնական միջոց է, եթե նրա համար բավական գումար է վճարված «երաշխավորված» ապրանք ստանալու համար:
- **Սարքավորումներ** - սարքավորում է համարվում գույքի այն տեսակը, որոնք սնվում են հիմնականում էլեկտրականությունից կամ դրա դրսևորումներից:
- **Նախագործառնական ծախսեր** - նախագործառնական է համարվում այն ծախսերը, որոնք արվում են նախքան գործը սկսելը, իսկ դրանից հետո արվածները արդեն համարվում այլ ընթացիկ ծախսեր:
- **Շրջանառու միջոցներ** - շրջանառու են կոչվում այն միջոցները, որոնք մեկ արտադրական ցիկլի ընթացքում վերածվում են ապրանքի կամ ապրանքին ապրանքային տեսք են հաղորդում ծախսվելով մասամբ կամ ամբողջությամբ այդ գործընթացում:
- **Նյութական պաշարներ** - այս բաժնում կարող է լինել, թե կանխիկ գումարը, թե հումքը նախնական, արտադրության համար անհրաժեշտ այլ նյութեր:
- **Աշխատավարձ** – այստեղ մտնում են թե քաղ.իրավական և թե հաստիքովները:
- **Վարչական ծախսեր** - սա կարող է լինել ինչպես գրենական պիտույքների ծախս, այնպես էլ ադմինիստրատիվ ցանկացած ծախս (գործադիր տնօրենների աշխատավարձը այս բաժնում պետք է լինի):
- **Իրացման ծախսեր**- մարքեթինգային՝ գովազդին վերաբերող, հանրային կապերի ապահովման, տեղեկատվության տարածման և այլ հարակից ցանկացած ծախս ամփոփվում է այս բաժնում:
- **Վարկ և տոկոսներ** կամ արտաբյուջետային ֆոնդ (եթե դրամաշնորհ է) - ամսեկան վճարումներն են այստեղ ներառվում:
- **Եկամտահարկ** - եկամուտից հարկում՝ կախված կոդաբերատիվ է թե այլ մասնավոր:
- **Ընդամենը շրջանառու միջոցներ** - գումարային բաժին է, բոլոր կետերի:
- **Ընդհանուրը տոկոսներով** - վերոնշյալ թվերն այստեղ ներառված են տոկոսներով:

Դրամական միջոցների պահանջ - բիզնես պլանի գումարով նշված մասը, թե որքան դրամ է պետք գումարային տեսքով այս գործը սկսելու համար: